ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/109

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Սոնատինա» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ռ. Մարուխյանի (իրավաբանական անձի պետական գրանցամատյան վկայական, N 03Ա 083646)

Ներկայացուցիչներ՝

Ս. Մինասյանի (լիազորագիր, տրված՝ 09.07.2019թ.)

Ա. Եսայանի (լիազորագիր, տրված՝ 09.07.2019թ.)

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչներ՝

Ա. Սողոմոնյանի (լիազորագիր, տրված՝ 08.07.2019թ.)

Ն. Կարապետյանի (լիազորագիր, տրված՝ 08.07.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11057-2019 գրությամբ «Սոնատինա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 27.06.2019թ. թիվ 02/01.91/3563-19 գրության հիման վրա, 02.07.2019թ. թիվ 26/26-1/11057-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Սոնատինա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Սոնատինա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Սոնատինա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 04.07.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

Ընկերությունը «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի որոշմամբ քսանմեկ չափաբաժիններից տասնչորս չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից, սակայն հարկային մարմինների կողմից ներկայացված տեղեկությունների համաձայն, 135000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարների գծով ժամկետանց պարտավորության (որի մասին Ընկերությունը տեղեկանալուն պես անմիջապես վճարել է) առկայության պարագայում «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերության հայտը գնահատվել է անբավարար: Նշված խնդրի շուրջ Ընկերությունը ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավարին 11.06.2019թ. ներկայացվել է բողոք-գրություն, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի կողմից 28.06.2019թ. թիվ 01.1/2-1/10949-2019 գրությամբ տրվել է պարզաբանում:

Այն հարցին, թե ինչ հիմնավորումներով են դրոշմանիշային վճարները համարվում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ, նշված գրությամբ հղում է արվել

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասին:

Միաժամանակ նույն գրությամբ նշվել է, որ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում տեղադրված է հաղորդագրություն այն մասին, որ քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին:

Այն, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության վերաբերյալ Ընկերությունը 2017թ. սկսած երբևէ պատշաճ չի ծանուցվել, Ընկերությունը փաստում է, որ բավարար իրազեկված երբևէ չի եղել դրոշմանիշային վճարը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ հանդիսանալու վերաբերյալ: Վերը նշված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ եզրույթը նման պարագայում պարունակում է տարընթերցում և կարող է մեկնաբանվել տարբեր կերպ: Այս պարագայում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումներին Ընկերության մասնակցելու իրավունքի մերժումն իրավաչափ չէ, հատկապես այն դեպքում, երբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի ենթատեքստը ամբողջապես վերաբերում է իրավախախտումներին: Ինչպես նաև համաձայն Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, գնման գործընթացների մասնակիցները պետք է լինեն առավել իրազեկված և վերջիններիս պետք է տրվեին բավարար պարզաբանումներ (մեջբերում՝ գնահատող հանձնաժողովը պարզաբանումներ է ներկայացնում ընթացակարգի վերաբերյալ): Չունենալով որևէ անձնային մեղադրանք, Ընկերությունը գտնում է, որ գնման գործընթացի կազմակերպման մեջ առկա են բողոքողումներ, որոնց արդյունքում հնարավոր չէ իրականացնել Օրենքի հիմնական պահանջը, այն է՝ իրականացնել շահեկան գնումներ:

Ընկերությունը տեղեկացրել է, որ նշված ծածկագրով Ընթացակարգին Ընկերության հայտի մերժումը կարող է առաջացնել պետական միջոցների անհարկի վատնում, հաշվի

առնելով Ընկերության և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների միջև զգալի տարբերությունը:

Առկա են նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխությունները, որոնց արդյունքում 01.06.2019թ. սկսած մասնակիցներին տրվել է հնարավորություն եռօրյա ժամկետում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները մարելու իրավունք: Ընկերությունը գտնում է, որ սույն փոփոխության ենթատեքստի հիմքում է ընկած նմանատիպ բողոքների առկայությունը, որն անուղղակի հիմնավորում է Ընկերության կողմից ներկայացված դիտարկումները:

Քանի որ «Սոնատինա» ՍՊԸ-ն, հանդիսանալով երաժշտական գործիքների առք և վաճառք իրականացնող մասնագիտական կազմակերպություն, հանդիսանում է արտասահմանյան մի շարք աշխարհահռչակ ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում, տարիներ շարունակ հանդիսացել է պետական գնումների շրջանակներում պատշաճ մատակարար, հարկային ժամկետանց պարտավորություններ երբևէ չի ունեցել: Հայաստանի Հանրապետությունում երաժշտական գործիքների վաճառքի շուկայում ունի ծանրակշիռ ներկայացվածություն, նույն շուկայում իր գործունեությամբ նպաստում է ոլորտի առողջ մրցակցությանը: Երաժշտական դպրոցների, քոլեջների, Երևանի Կոմիտասի անվան Կոնսերվատորիայի ուսանողների նկատմամբ միշտ կիրառել է զեղչեր և ցուցաբերել ահատական մոտեցում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Սոնատինա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/109 ընթացակարգի շրջանակներում 09.07.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.06.2019թ. թիվ 02/01.91/3563-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով 21 չափաբաժնով հայտարարված «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել 6 մասնակից, այդ թվում՝ «Սոնատինա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019 թ. կայացած հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը «Սոնատինա» ՍՊԸ-ին ճանաչել է Ընթացակարգի 14 չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցնող մասնակից:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրվել է հարցման մասին տեղեկատվություն:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.05.2019թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից «Սոնատինա» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը չի համապատասխանում հրավերի

պահանջներին. մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

14.05.2019թ. «Սոնատինա» ՍՊԸ-ի կողմից ստացվել է դիմում, որով Ընկերությունը հայտնել է, որ Ընկերությունը տեղեկացված չի եղել հարկային պարտավորության վերաբերյալ, քանի որ համաձայն «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների սահմանված ժամկետից ուշացման վերաբերյալ հարկային մարմնի կողմից պատշաճ ծանուցված և տեղեկացված չի եղել: Ընկերությունը վերոնշված ժամկետանց պարտավորության մասին տեղեկանալու դեպքում անմիջապես կատարել է իր պարտավորությունը՝ գրությանը կցելով 07.05.2019թ. իրականացված վճարման հավաստագրի պատճենը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության N 3 բաժնի 13.05.2019թ. տրված 2 տեղեկանքները՝ 26.04.2019թ. և 10.05.2019թ. դրությամբ «Սոնատինա» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ: Ընդ որում՝ 26.04.2019թ. դրությամբ տեղեկանքում «Սոնատինա» ՍՊԸ-ի հարկային պարտավորության չափը «Դրոշմանիշային վճարի» մասով կազմում է 135.0 հազար ՀՀ դրամ, իսկ 10.05.2019թ. դրությամբ տեղեկանքում «Սոնատինա» ՍՊԸ-ն հարկային պարտավորություններ չունի:

Այսինքն՝ «Սոնատինա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ «Սոնատինա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու դրությամբ ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, որը և արտացոլված է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի, ինչպես նաև «ՀՀՄՆ-

ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.15-րդ կետի պահանջները՝ հանձնաժողովը 2019 թվականի մայիսի 23-ին՝ ժամը 10:00-ին կայացած նիստում որոշել է «Սոնատինա» ՍՊԸ-ի հայտը մերժել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, միաժամանակ, հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/109 ընթացակարգի շրջանակներում 09.07.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/109 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/109 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 25.04.2019թ. մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Սոնատինա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Սոնատինա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի թվով 14 չափաբաժինների մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 06.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Սոնատինա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի***

կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 135 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Սոնատինա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11057-2019 գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 27.06.2019թ. թիվ 02/01.91/3563-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանութ-յան մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարված «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին 25.04.2019թ. հայտ ներկայացրած մասնակից «Սոնատինա» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի թվով 14 չափաբաժինների մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 06.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Սոնատինա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 135 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Սոնատինա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում

ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սոնատինա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն (առավելագույն գնային առաջարկը կազմել է 1 750 000 ՀՀ դրամ՝ 14-րդ չափաբաժնի համար, իսկ նվազագույնը՝ 24 000 ՀՀ դրամ՝ 19-րդ չափաբաժնի համար), մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ արձանագրված ժամկետանց պարտավորությունն իրենից ներկայացնում է դրոշմանիշային վճարի գծով պարտավորություն, որի վերաբերյալ Ընկերությունը տեղեկացված չի եղել: Այս առումով հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Դրա հետ մեկտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հանդիսանում է հարկային եկամուտ և հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից 10.07.2019թ. տրված տեղեկանքը, համաձայն որի՝ 01.11.2018թ. դրությամբ Ընկերության դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը կազմել է 105 000 ՀՀ դրամ, որի վերաբերյալ Ընկերությունը տեղեկացված չի եղել:

Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ մինչև 01.11.2018թ. դրությամբ առկա 105 000 ՀՀ դրամի դորշմանիշային վճարի գծով պարտավորության չափը, որի վերաբերյալ Ընկերությունը տեղեկացված չի եղել, այնուամենայնիվ գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «Սոնատինա» ՍՊԸ-ն «ՀՀ ՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի գտնում եմ, որ առկա են

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11057-2019 գրությամբ «Սոնատինա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սոնատինա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**